ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ՁՈՐԲԱՍՏԱՆՈՒՄ

Անտառ, դիմացը, աջ ու ձախ շաւիղներ։ Մեջտեղը փոքրիկ բացատ։ Գիւղական քեֆ է։ Հիւրերը բոլորել են սուփրի շուրջը։

ՀԻՒՐԵՐ.– Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան։

ՄԻ ԱՌՈՅԳ ԾԵՐՈՒՆԻ.– (Շորորալով ու կոտրատուելով կենտապար է պարում, հետն էլ ինքն իրան չափ է տայիս։ Գինով է) Ը՛մ, տարա-նի ի՛ի՛ի՛, նիյ-նա՛մ… ը՛մ, տարանի ի՛ի՛ի՛, նիյ-նա՛մ (դիմում է հիւրերից մեկին) Խնա՛մի Թաթոս… ը՛մ, տարանի ի՛ի՛ի՛, նիյ-նամ… Խնա մի Թաթոս, ղոչա՞ղ ես… Հա՛, ղոչաղ կաց, թէ չէ կայծե՛րդ կհանեմ…ը՛մ, տարա-նի՛ի՛ի՛ի , նիյ-նամ։

ՀԻՒՐԵՐ.– (Պարողին) Ձա՛ն, Ղունկիանոս խնամի, շա՛ն։

ՄԻ ՀԻՒՐ.– Ձա՛ն, Ղունկիանոս խնամի, նստի՛։ Այ տղա, Ղունկիանոս խնամու համար գինի ածէք։ Առոյգ՝ ծերուկին նստեցնում են։

ԹԱՄԱԴԱ.– Գեղի իշխանաւորներին՝ հրամա՛ն։ Թասերդ լցրե՛ք,

ՄԻ ՀԻՒՐ.– Ձա՛ն, իշխանաւո՛ր Թամադա։ Հրամայի, մեր տէրն ես։

ԹԱՄԱԴԱ.– Ասելս էն է, որ աստուած մեր զոռը հաստատ պահի գեղերի գլխին։ Էս էլ աստուած շէն պահի մեր նոր խնամի ու մեր գեղի քեթխուդա Մաթոսենց Թաթոսին։

ՀԻՒՐԵՐ.– Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան։ Խնամի Թ՛աթոս, կենա՛ցդ։ (Խմում են։)

Դուրսը աղմուկ է լսւում։

ԹԱՄԱԴԱ.– Մի տեսէք էն ո՞վ է, ի՞նչ ձիաւոր է,

ՁԱՅՆԵՐ.– Ճամփորդ է,

ԹԱՄԱԴԱ.– Ճամփորդը աստծու հիւրն է։ Ձիուց վեր բերէք, սուփրի մօտ։

Դուրս են ելնում եւ դէմից ներս են բերում Նազարին, որ դրօշակը ձեռին, սուրը կապած՝ կանգնում է եւ վախեցած ու խոժոռ նայում է հիւրերին։ Հիւրերն էլ կասկածելով մտիկ են տալիս նրան։

ԹԱՄԱԴԱ.– (Նայելով նրա դրօշակին եւ երեւոյթին կասկածոտ) Համեցէք։ (Իր մօտ նստողներին) Ա՛յ տղա, ճամփա տուէք հիւրին, անց կենա դեսը։ (Ճամփա են տալիս։)

ՆԱԶԱՐ.– (Անվստահ, բայց խոժոռ հայեացքով նայում է չորս դին, հազում է եւ իր դրօշակով գալիս, նստում է թամադի, վարժապետի ու ծերերի կողքին։ Լռութիւն։ Նորից հազում է։)